

# **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1200 - Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

**ՆԱԽԱԳԻԾ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

□ □ 2021 թվականի N - Ն

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ**

## **ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1200-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկլարվելով □Նորմատիվ իրավական ակտերի մասին□ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի □Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման գոհերի նույնացման հանձնաժողովի աշխատակարգը, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման գոհերի նույնացման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդ ներկայացվող հաշվետվության ձևը սահմանելու մասին□ N 1200 - Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- Որոշման N 1 հավելվածում՝

ա. 3-րդ կետը լրացնել 7-րդ, 8-րդ և 9-րդ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ՝

«7) իր գործառույթների իրականացման արդյունքում վերհանված խնդիրների,

դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդին է ներկայացնում առաջարկներ.

8) յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող նիստում ծանոթանում է տվյալ տարվա հաշվետու ժամանակահատվածում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման գոհերին կամ հատուկ կատեգորիայի գոհերին կամ հավանական գոհերին տրամադրած աջակցության և պաշտպանության գործընթացին.

9) անհրաժեշտության դեպքում այցելություններ է կատարում թրաֆիքինգի գոհերի համար թիրախային համարվող վայրեր՝ (հատուկ դպրոցներ, հոգեբուժարաններ, մանկատներ և այլ խնամքի հաստատություններում) ուսումնասիրություններ և իրազեկման աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև այդ վայրերում արտագնա նիստեր կազմակերպելու համար:»

բ. 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

□8. Հանձնաժողովի նիստին, ըստ անհրաժեշտության, խորհրդատուի կարգավիճակով կարող են մասնակցել պետական այլ շահագրգիռ մարմինների պատասխանատու աշխատակիցներ, հոգեբաններ, մանկավարժներ և այլ մասնագետներ:

գ. 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«11. Հանձնաժողովի որոշումներն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից: Հանձնաժողովի անդամների մեծամասնության համաձայնության դեպքում, ըստ անհրաժեշտության, մարդուն զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ տալու մասին հանձնաժողովի որոշման քաղվածքի մեկական օրինակ կարող է տրամադրվել նախանույնացումն իրականացրած իրավասու մարմնին, նույնացված զոհին կամ հատուկ կատեգորիայի զոհին կամ նրա օրինական ներկայացուցչին: Հանձնաժողովի քարտուղարը քաղվածքը հանձնելու մասին կատարում է համապատասխան գրառում հատուկ մատյանում՝ նշելով ստացողի անունը, ազգանունը, նրան աջակցող կազմակերպության անվանումը, ստանալու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը: Գրառման դիմաց դրվում է ստացողի ստորագրությունը: Քաղվածքի օրինակելի ձևը և մատյանի ձևը հաստատվում է հանձնաժողովի կողմից՝ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի մասնակիցների առարկությունների և առաջարկությունների մասին հայտարարությունները, եթե այդպիսիք եղել են, արտացոլվում են նիստի արձանագրությունում:»

դ. 13-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«2) իր կամ հանձնաժողովի անդամների նախաձեռնությամբ կամ իրավասու մարմինների միջնորդությունների հիման վրա հանձնաժողովի նիստ իրավիթելու անհրաժեշտության մասին իրազեկում ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում իրավիթում է հանձնաժողովի նիստ:»

ե. 13-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«7) իրավասու մարմիններից ստանում է տեղեկատվություն և յուրաքանչյուր կիսամյակ, մինչև հաջորդող ամսվա 15-ը Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդ է ներկայացնում սույն որոշման N 2 հավելվածով նախատեսվող հաշվետվությունը.»

զ. 18-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

2) Որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հավելված

ՀՀ կառավարության 2021 թվականի

----- ի

N ----- Ն որոշման

Հավելված N 2

ՀՀ կառավարության

2015 թվականի հոկտեմբերի 15-ի

N 1200-Ն որոշման

## **ՁԵՎ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԺԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՉՈՂԵՐԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԺԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ**

### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

- հաշվետու ժամանակահատվածում նույնացման ներկայացված հավանական զոհերի թիվը.

- հաշվետու ժամանակահատվածում նույնացված զոհերի՝

ա.թիվը,

բ.սեռը,

գ.տարիքը,

դ.քաղաքացիությունը,

ե.բնակության վայրը,

զ.թրաֆիքինգի/շահագործման տեսակը

- աջակցություն ստանալու նպատակով՝ ուղղորդված հավանական զոհերի, զոհերի/հատուկ կատեգորիայի զոհերի թիվը, օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց տրամադրված աջակցության տեսակները (պետական և ոչ պետական)
- հավանական զոհին/զոհերին հայտաբերող կառույցը/կառույցները (կազմակերպություն/ները).
- պաշտպանության համար ներկայացված միջնորդությունները և միջնորդության հիման վրա կայացրած որոշումները.
- հաշվետու ժամանակահատվածում զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին տրամադրվող սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայության շրջանակում կատարված ծախսերի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը.

